23. ՉԱՐ ՊԱՌԱՎԸ

Իլալ ա, չի իլալ, մին չար պառավ ա իլալ։ Էտ պըռավեն էրկու ախչիգ։ ա իլալ. մինը՝ խորթ, մինը՝ հալալ։ Խորթ ախչիգը շատ խելունք անշուկթիթև ա իլալ, ամմա հալալ ախչիգը թոքի յա իլալ։ Ժուղովուրթը շատ սիրըմ, հարկում ա իլալ խորթ ըխչկանը։ Ըտրա մհար պառավը ուզեցալ ա, վեր խորթ ըխչկանը կուրցընե, հանցու վեր ժուղովուրթը սիրի ուրան հալալ ըխչկանը։ Պառավը մին հնարք չի քթալ։ Ըշտեղ զարկում ար ըխչկանը, ախչիգը վազ տալավ քյընում, կյալիս ար։

Պառավը քնենքյ ա ըրալ քնենքյ, վերչը հնարը քյթալ։ Էրկու հաց ա թխալ՝ մինը՝ լավ, համմա էն մինը՝ շատ աղի։ Մին օր սա ըխչկերանցը վեր ա կըցըրալ, թա քյնում ընք Կըքավա սարը, շամ վառինքյ։ Ըխչկերքյը եր ըն կնաս մորը առաչը ընգնիս, քյինիս։ Շատ ըն քյինիս, խրեգյ ըն քյինիս, ըխչկերքը սուվուծընաս ըն։ Ահետ մարը էն սորուն հացը տաս ա հալալ ըխչկանը, ամմա աղի հացը տաս ա խորթ ըխչկանը։ Ըխչկերքյը օտում ըն։ Աղի հաց օտող ախչիգյը շատ ա ծրավում, ամմա ճուր չի ճարում։

Պառավը պիրըմ ա մին սարի պտոկ, ահետ ըխչկանը ըսես. — Էս չոր հացը թուլ ըմ տլական։ Ըստուծեն հրամանավը քյնանական ա ախպուրը ճարի, կխմիս, ահետ կյաս։

Հացը թուլուլ ա տաս, խորթ ախչիգը քյիս ա, քյիս, վեչ հացն ա ճրիս, վեչ ախպուրը։ Շատ վեր քյիս ա, պառավը մին էլ ուրան հալալ ախչիգը փխչիս ըն, կյաս տոն։ Խորթ ախչիգը շատ ա շոռ

կյաս, համմա վեչ ախպուրն ա ճրես, վեչ հացը։ Քշերը լաց ինիլավ կյաս ա տոն։

Մաը ըսիս ա.— Յա քյնի հացը ճարի պեր, յա քի կախ ըմ տլա-կան քշերը։

Ախչիգյը ընգիս ա ծմկնեն, լաց ինիլավ շոռ կյաս, վեր հացը ճարի։ Շատ վեր լաց ա ընիս, ըրտսունքները մին կյետ ա տռնայս ըսկսիս քյնալը։ Էտ կյետետ ճուրը հանիս ա մին չուրանու։ Ջորանը խմիս ա, տսնայս աղի։ Էտ վեր տսնայս ա, զրմնայս ա։ Որ ա կնայս էտ ճրիտ վարը յոր ունես քյիս... Շատ ա քյիս, խրեգյ ա քյիս, տսնայս ա մին ախչիգյ նստած մուղուր, մուղուր կյալավ խըրըվխարավ կյալավ լաց ա ինիյս։

Հրցնիս ա.— Ա՛յ ախչիգյ, խե՞ լաց ըս ինիյս։

Ախչիգյը մին-մին պտմիս ա ուրան դարդը։ Ահետ եր ա կնայս, թա՛ քարնվեր ընգնի։ Ջորանը թուղես չի, փռնես ա պիրիյս ուրանց շենը։

Ահետ քյիս ըն չար պռավեն ըսիս.— Ա՛ պառավ, պա ասի՞լ չըս, ստի-ստի մին ախչիգյ տրեսալ ըն էն սարըմը կախ իլած։

Պառավը ուրխունայս ա, չուբանեն ըսիս.— Վեր տու տի լավ խրար ըս պիրալ տու կինիս իմ փեսեն։

Ջորանը տսնայս ա, վեր պառավը ղասիդ ա ըրալ, յոր ա ունես պռավեն ալ, ուրան ըխչկանն ալ տնիս էն սարը, ըշտեղան հացը թուլուլ ա տվալ, խորթ ախչիգյը ղարկալ ընդեղ։ Մին մըեծ քերծա քցիս տակը, ըրկոքանեն ալ գյոռրագյոռ ըրիս։

Կյաս ա էն խորթ ըխչկանը հետե ուրան վըխճըրներան մին լավը մուրթես, հրսանեքյ ընես, տնիս ուրան հորը տանը, թուղիս, ինքյը քյիս ուրան պենեն։

Էն օրանը ետը հու վեր հուրու մին փսոթուն ա ընիս, ասիս ըն.

— Ա՛խճի, չար պառավն ը՞ս։